

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

«ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԻՍՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ»

Հասարակական կազմակերպության
համաժողովի որոշմամբ

11 մարտի 2017թ.

Կազմակերպության նախագահ՝

..... Վ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀՀ Արդարադատության նախարարի
03 նոյեմբերի 1998թ. թիվ 933 հրամանով

Վ Ե Ր Ա Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի
կողմից

04 փետրվարի 2004թ.

Գրանցման թիվ 211.171.02403

Վկայական 03 Ա 063471

ՀՎՀՀ 00055317

04.02.2004թ. գրանցված կանոնադրության
թիվ 002-2 փոփոխությունը գրանցված է
ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի կենտրոնական
մարմնի կողմից

19.06. 2015թ.

Պետական ռեգիստրի գործակալության պետ՝

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԻՍՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպությունը /այսուհետև՝ Կազմակերպություն/, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ: Կազմակերպության կրճատ անվանում է «ՀՖՄ»,

անգլերեն անվանումն է՝ «Communities Finance Officers Association», կրճատ՝ CFOA, ռուսերեն անվանումն է՝ «Ассоциация муниципальных финансистов», կրճատ՝ АМФ:

1.2. Կազմակերպությունը գործում է առանց անդամության սահմանափակման:

1.3. Կազմակերպությունը գործում է օրինականության, խտրականության բացառման, բարեխղճության, անդամների շահերի ընդհանրության, անդամության կամավորության, ինքնակառավարման, հաշվետվողականության սկզբունքներով:

1.4. Կազմակերպությունը չի հետապնդում քաղաքական նպատակներ:

1.6. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.7. Կազմակերպության գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Երվանդ Քոչարի փող., 20:

Կազմակերպության պաշտոնական համացանցային կայքն է՝ <http://cfoa.am/>:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Կազմակերպության գործունեության առարկան հանրային կառավարման ոլորտի հիմնախնդիրներն են:

2.2. Կազմակերպության նպատակներն են.

- բարձրացնել տեղական ինքնակառավարման և պետական կառավարման արդյունավետությունը,
- բարձրացնել հանրային կառավարման ոլորտում ընդգրկված ծառայողների մասնագիտական գիտելիքները և ունակությունները,
- աջակցել հանրային կառավարման՝ մասնավորապես, տեղական ինքնակառավարման, ոլորտում իրականացվող բարեփոխումներին,
- օժանդակել համայնքներին պատշաճ կառավարում իրականացնելու գործընթացում,
- բարձրաձայնել համայնքների և բնակիչների խնդիրները, պաշտպանել նրանց իրավունքները և օրինական շահերը,
- նպաստել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում և տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության աստիճանի բարձրացմանը:

2.3. Կազմակերպությունը իր կանոնադրական նպատակներին հասնելու համար և իր գործունեության շրջանակներում իրականացնում է՝

- համայնքների պատվերով կամ համաձայնությամբ՝ խորհրդատվություն համայնքի զարգացման ծրագրերի և բյուջեների կազմման, իրականացման, մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ.
- համայնքների պատվերով կամ համաձայնությամբ՝ վերլուծություններ համայնքների ֆինանսական կառավարման ուղղությամբ.
- համայնքների ֆինանսական գործունեության արդիականացմանը նվիրված սեմինարների, գիտաժողովների և քննարկումների կազմակերպում.
- ուսուցման և վերապատրաստման դասընթացների կազմակերպում տեղական ինքնակառավարման բնագավառի մասնագետների համար.
- հատուկ թեմատիկ դասընթացներ տեղական ինքնակառավարման համակարգի օրենսդրության վերաբերյալ.
- օրենսդրական և ֆինանսական խորհրդատվություն տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմիններին.
- համայնքների բյուջեների մոնիթորինգ և գնահատում.
- տեղական ինքնակառավարման և հանրային ֆինանսների վերաբերյալ ոչ ֆորմալ կրթական ծրագրեր.
- համայնքների աշխատակազմերի ֆինանսական ստորաբաժանումներին համապատասխան օրենսդրական, մեթոդաբանական և այլ բնույթի տեղեկատվության ապահովում,
- տեղական ինքնակառավարման մարմինների ընտրական գործընթացների դիտարկում և մոնիթորինգ,

2.3 Կազմակերպությունը իր կանոնադրական նպատակներին հասնելու համար կազմակերպության կողմից իրականացվող գործունեությունը կարող է իրականացնել վճարովի, անվճար կամ դրամաշնորհային միջոցների հաշվին:

2.4 Կազմակերպությունը ակտիվ գործունեություն է իրականացնում օրենսդիր և գործադիր կառավարման տարբեր կառույցներում համայնքների ֆինանսական շահերը արտահայտելու և դրանք պաշտպանելու ուղղությամբ:

2.5 Կազմակերպությունը համագործակցում է հանրապետության և արտասահմանյան հասարակական կազմակերպությունների հետ:

2.6 Կազմակերպությունը կարող է իրականացնել Կազմակերպության կանոնադրական նպատակներից բխող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

3.1. Կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ՝ պետական լիազոր մարմնի կողմից Կազմակերպության պետական գրանցման պահից:

3.2. Կազմակերպությունը ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ:

Կազմակերպությունը՝

- ա) ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, հայերեն և անգլերեն լեզուներով կլոր կնիք, դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում՝ թե ՀՀ և թե օտարերկրյա արժույթով,
- բ) իր անունից կարող է ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, հայցվոր և պատասխանող հանդես գալ դատարանում:
- 3.3. Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը:
- 3.4. Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝
- ա) տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին,
- բ) ներկայացնել և պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը դատարանում և այլ կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ իրավահարաբերություններում,
- գ) համագործակցել այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով, այդ կազմակերպությունների հետ ստեղծել միություններ, կամ անդամակցել նրանց ստեղծած միություններին՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը,
- դ) ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ,
- ե) իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- զ) իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն իր կողմից հիմնադրված առևտրային կազմակերպությունների միջոցով, մասնակից և/կամ համահիմնադիր դառնալ այդպիսի կազմակերպություններին,
- է) օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, ստանալ կամ այլ պայմաններով, այդ թվում նաև անվճար, օգտագործել անշարժ գույք, հիմնական միջոցներ, տրանսպորտ, օրենքով չարգելված այլ գույք,
- ը) կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և գործարքներ,
- թ) օտարել, վարձակալության և/կամ օգտագործման հանձնել կազմակերպությանը պատկանող ցանկացած գույք,
- ժ) ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, ՀՀ-ում և այլ պետություններում ստանալ վարկեր, դրամաշնորհներ, այդ թվում արտարժույթով,
- ի) ունենալ միջոցներ ՀՀ արժույթով ու արտարժույթով, ՀՀ օրենսդրությանը համապատասխան ձեռք բերել, ստանալ և/կամ ինքնուրույն տնօրինել դրանք,
- լ) իրականացնել ինքնուրույն արտաքին գործունեություն, իր անդամներին գործուղել արտասահման, հրավիրել այլ երկրներից քաղաքացիներ, ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:
- խ) կազմակերպել իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան վճարովի խորհրդատվություն, փորձագիտություն, սեմինարներ, ուսուցողական

դասընթացներ և օրենքով չարգելված այլ գործունեություն՝ դրանց համար վարելով առանձնացված հաշվառում,

ծ) հիմնադրել լրատվության միջոցներ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կազմակերպությունը պարտավոր է՝

4.1. Իրականացնել իր ընթացիկ գործունեությունը համաձայն Կազմակերպության կառավարման մարմնի կողմից հաստատված աշխատանքային կարգերի:

4.2. Օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում:

4.3. Վարել իր անդամների և կամավորների հաշվառումը:

4.4. Իր գործունեության և գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության համաժողովի հաստատմանը, ոչ պակաս, քան երեք տարին մեկ անգամ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը:

4.5. Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական լիազոր մարմիններին:

4.6. ՀՀ պետական լիազոր մարմնի պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել Կազմակերպության բարձրագույն և մյուս մարմինների որոշումների պատճենները, Կազմակերպության գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել այդ մարմնի ներկայացուցիչներին ներկա գտնվելու Կազմակերպության համաժողովին:

4.7. Առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու և կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ մեկ ամսյա ժամկետում, դիմել պետական գրանցման մարմին՝ սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար:

4.8. Իրականացնել օրենքով նախատեսված այլ պարտավորություններ:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կազմակերպությունը իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իրեն պատկանող գույքով՝ օրենքով սահմանված կարգով:

5.2. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում պետության պարտավորությունների համար, ինչպես որ պետությունը պատասխանատվություն չի կրում Կազմակերպության պարտավորությունների համար:

5.3. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար, ինչպես որ վերջիններս պատասխանատվություն չեն կրում կազմակերպության պարտավորությունների համար: Եթե Կազմակերպությունն իր անօրինական գործունեությամբ վնաս է հասցրել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, պարտավոր է այն հատուցել իր գույքի հաշվին՝ օրենքով սահմանված կարգով:

5.4. Պետական մարմինների և պաշտոնական անձանց կողմից Կազմակերպության գործունեությանը միջամտելն արգելվում է, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

5.5. Կազմակերպությանը հասցված վնասը, որը հետևանք է պետական կամ այլ մարմինների, կամ նրանց պաշտոնատար անձանց կողմից Կազմակերպության

իրավունքների խախտման, ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման, ենթակա է փոխհատուցման այդ մարմինների կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6. Անձի անդամակցությունը կազմակերպությանը չի կարող հանդիսանալ նրա իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմք, պետական և այլ մարմիններում պաշտոն զբաղեցնելու պայման կամ արգելք:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

6.1. Կազմակերպության անդամ կարող են դառնալ համայնքները և ֆիզիկական անձինք:

6.2. Համայնքը կազմակերպության անդամ կարող է դառնալ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված դիմումի հիման վրա: Համայնքի կողմից անդամավճարի վճարումը իրականացվում է տվյալ համայնքի բյուջեից:

6.3 Որպես ֆիզիկական անձ Կազմակերպության անդամ կարող են դառնալ ՀՀ և օտարերկրյա քաղաքացիները, որոնք ընդունում են Կազմակերպության կանոնադրությունը, ցանկանում են մասնակցել նրա գործունեությանը: Մինչև տասնչորս տարեկան անչափահասը Կազմակերպությանը կարող է անդամագրվել իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա: Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, Կազմակերպությանը կարող է անդամագրվել իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

6.4 Կազմակերպության անդամ դառնալ ցանկացողները պետք է կազմակերպության վարչությանը (այսուհետև՝ վարչություն) ներկայացնեն գրավոր դիմում՝ մուծելով մուտքի վճար, որի չափը սահմանվում է համաժողովի կողմից:

6.5. Կազմակերպությանը անդամակցելու և անդամությունից զրկելու հարցը որոշում է Կազմակերպության վարչությունը: Կազմակերպությանը անդամակցելու վերաբերյալ դիմումի մերժումը գանգատարկման ենթակա չէ:

6.6 Կազմակերպության անդամները կարող են հրաժարվել Կազմակերպության անդամությունից, եթե այդ մասին գրավոր դիմում են ներկայացնում Կազմակերպության վարչությանը:

6.7. Կազմակերպության անդամները մուծում են անդամավճար, որի չափը սահմանվում է Կազմակերպության համաժողովի կողմից:

6.8 Կազմակերպության անդամը կարող է հեռացվել կազմակերպությունից եթե.

- որպես կազմակերպության անդամ չի կատարել իր վրա դրված պարտականությունները,
- խախտել է սույն կանոնադրության դրույթները,
- 3 տարի անընդմեջ չի մուծել անդամավճար, Կազմակերպության կողմից բանավոր կամ գրավոր նախազգուշացվելուց հետո մեկ ամսվա ընթացքում չի մարել ֆինանսական պարտավորությունները,
- դիտավորյալ վնասել կամ ոչնչացրել է կազմակերպության գույքը:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

ա) ներկա գտնվել Կազմակերպության համաժողովին, եթե նույնիսկ վերջինս անցկացվում է Կազմակերպության անդամների պատվիրակների կազմով, իսկ ինքը պատվիրակ չի ընտրվել,

բ) ծանոթանալ Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները և դրանցից քաղվածքները,

գ) Կազմակերպության մարմինների որոշումները բողոքարկել Կազմակերպության համաժողովում,

դ) Կազմակերպության մարմնի (այդ թվում՝ բարձրագույն մարմնի) որոշումը, որն ընդունվել է օրենքի, Կազմակերպության կանոնադրության կամ վերադաս մարմինների որոշումներով սահմանված կարգի խախտմամբ, կամ ոտնահարել է Կազմակերպության կամ Կազմակերպության անդամի իրավունքներն ու օրինական շահերը, կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել Կազմակերպության անդամի դիմումի հիման վրա: Նման դիմում կարող է տրվել 60 օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Կազմակերպության անդամն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

7.2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

ա) հոգ տանել Կազմակերպության հեղինակության բարձրացման համար,

բ) կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները, ղեկավար մարմինների որոշումները,

գ) աջակցել Կազմակերպության անդամության համալրմանը,

դ) մուծել մուտքի վճար և անդամավճար,

ե) բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները:

Կազմակերպության կանոնադրության դրույթները խախտող անդամի նկատմամբ Կազմակերպության համաժողովի կամ վարչության կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ ընդհուպ Կազմակերպության անդամությունից հեռացումը:

7.3 Կազմակերպության անդամությունից հեռացնելու մասին Կազմակերպության վարչության որոշումը կարող է բողոքարկվել Կազմակերպության համաժողովին:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

8.1. Կազմակերպության շահառուներն են

- Համայնքային ծառայողները,
- Քաղաքացիական ծառայողները,
- Տեղական ինքնակառավարման ոլորտի փորձագետները և մասնագետները,

- Միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները,
- Տեղական ինքնակառավարման հարցերով զբաղվող՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և խմբերը,
- Տեղական ինքնակառավարման ոլորտում քաղաքականություն իրականացնող պետական լիազոր մարմինը,
- Համայնքների բնակիչները, տեղական ինքնակառավարման մարմինները, աշխատակազմերը:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

9.1. Կազմակերպության բարձրագույն մարմինը նրա համաժողովն է, որն ունի կազմակերպության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում ընդունելու իրավունք:

9.2. Կազմակերպության հերթական համաժողովը հրավիրվում է երեք տարին մեկ անգամ: Վարչության կողմից համաժողովի օրակարգի, նրա աշխատանքն սկսելու տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները տեղյակ են պահվում ոչ ուշ, քան ժողովի անցկացման օրվանից 14 օր առաջ: Կազմակերպության անդամների 1/3-ի կամ Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի պատճառաբանված պահանջի դեպքում, ոչ ուշ, քան 14 օրացույցային օրվա ընթացքում, հրավիրվում և տեղի է ունենում Կազմակերպության արտահերթ համաժողով:

9.3. Կազմակերպության համաժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

ա) Կազմակերպության նոր կանոնադրության հաստատումը, նրանում փոփոխությունների ու լրացումների կատարումը,

բ) Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունների հաստատումը,

գ) երեք տարի ժամկետով Կազմակերպության վարչության ու նախագահի ընտրությունը և հետ կանչելը,

դ) մուտքի վճարի և անդամավճարի չափերի սահմանումը,

ե) երեք տարի ժամկետով վերստուգիչ հանձնաժողովի անդամների ընտրությունը և հետ կանչելը,

զ) վարչության գործունեության հիմնական ուղղությունների սահմանումը համաժողովին հաջորդող երեք տարվա համար,

է) վարչության և վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունների ընդունումը և հաստատումը,

ը) Կազմակերպության լուծարման ու վերակազմակերպման մասին որոշման ընդունումը:

Սույն կետի ա) և ը) ենթակետերով սահմանված հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են համաժողովին ներկա անդամների ձայների երկու երրորդով: Մնացած հարցերով որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

9.4. Կազմակերպության համաժողովը իրավագոր է, եթե նրան մասնակցում են Կազմակերպության անդամների կեսից ավելին:

9.5. Կազմակերպության վարչությունն ընտրվում է համաժողովի կողմից՝ փակ, գաղտնի քվեարկությամբ, երեք տարի ժամկետով: Կազմակերպության վարչության անդամների թիվը սահմանվում է 15 հոգի: Վարչությունն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են առնվազն յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ: Վարչության անդամների մեկ երրորդի կամ նախագահի պահանջով կարող են հրավիրվել վարչության արտահերթ նիստեր:

9.6. Վարչությունը՝

ա) հանդիսանում է Կազմակերպության ղեկավար մարմինը համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում,

բ) առաջարկություններ է ներկայացնում համաժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ,

գ) ընդունում է Կազմակերպության անդամ և ազատում է անդամությունից,

դ) Կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքներ և տույժի միջոցներ,

ե) վարում է Կազմակերպության ընթացիկ գործունեությունը համաժողովների միջև ընկած ժամանակաշրջանում,

զ) սահմանում է Կազմակերպության գործունեության աշխատանքային կարգերը,

է) սահմանում է կազմակերպության անդամների կողմից անդամավճարների վճարման ձևերը,

ը) ստեղծում և լուծարում է Կազմակերպության կառուցվածքային միավորները, առանձնացված ստորաբաժանումները (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ), առևտրային կազմակերպությունները, ինչպես նաև հաստատում է նրանց կանոնադրությունները,

թ) ընդունում է որոշումներ Կազմակերպության պաշտոնատար անձանց գույքային պատասխանատվության ենթարկելու մասին,

ժ) իրավասու է ընդունել որոշումներ՝ գույք ձեռք բերելու, տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու, այդ թվում՝ օտարելու և դուրս գրելու վերաբերյալ,

ի) իրավունք ունի քննել ու լուծել ցանկացած հարց, բացառությամբ Կազմակերպության համաժողովի բացառիկ իրավասությանը վերապահվածներից:

9.7. Կազմակերպության վարչության նիստը իրավագոր է, եթե նրան մասնակցում են վարչության անդամների կեսից ավելին:

Վարչության որոշումներն ընդունվում են նիստին մասնակից անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է:

9.8. Կազմակերպության նախագահը ընտրվում է համաժողովի կողմից՝ փակ, գաղտնի քվեարկությամբ երեք տարի ժամկետով: Կազմակերպության նախագահը ի պաշտոնե հանդիսանում է վարչության նախագահը:

9.9. Կազմակերպության նախագահը՝

- առանց լիազորագրի գործում է Կազմակերպության անունից,

- իրականացնում է Կազմակերպության ընթացիկ ղեկավարումը,
- տնօրինում է Կազմակերպության գույքը և ֆինանսական միջոցները,
- ներկայացնում է Կազմակերպությունը ՀՀ-ում և արտերկրում,
- հրավիրում է վարչության նիստեր, համակարգում է վարչության գործունեությունը,
- կնքում է համաձայնագրեր և աշխատանքային պայմանագրեր,
- տալիս է լիազորագրեր, բանկային հիմնարկներում բացում է հաշվարկային հաշիվներ,
- արձակում է հրամաններ և կարգադրություններ,
- Կազմակերպության անդամներին և աշխատողներին տալիս է կատարման համար պարտադիր հանձնարարություններ:

Կազմակերպության նախագահը հաշվետու է վարչությանը:

Կազմակերպության նախագահն իր պաշտոնը ստանձնում է նախորդ նախագահի լիազորությունների ավարտման օրը:

9.10. Կազմակերպության նախագահի առաջարկությամբ, վարչությունն իր կազմից ընտրում է Կազմակերպության նախագահի տեղակալ, որը նախագահի բացակայության դեպքում իրականացնում է նրա լիազորությունները:

9.11. Կազմակերպության ընթացիկ աշխատանքների իրականացման համար, վարչությունը կարող է հիմնել Կազմակերպության գործադիր տնօրենի հաստիք՝ իր որոշմամբ սահմանված լիազորություններով:

9.12. Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում է Կազմակերպության համաժողովի կողմից՝ փակ, գաղտնի քվեարկությամբ, երեք տարի ժամկետով և հաշվետու է նրան:

9.13. Վերստուգիչ հանձնաժողովի անդամները երեքն են, որոնցից մեկը իրենց կողմից ընտրվում է նախագահ:

9.14. Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը իրավասու է՝

- ցանկացած ժամանակ անցկացնել Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում,
- պահանջելու և ստանալու Կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկություններ,
- հսկողություն իրականացնել Կազմակերպության կառուցվածքային մարմինների գործունեության նկատմամբ,
- վերահսկել Կազմակերպության գույքի պահպանումը և Կազմակերպության բարձրագույն և կառուցվածքային մարմինների որոշումների կատարումը,
- Կազմակերպության պաշտոնատար անձանցից, անդամներից ու աշխատողներից պահանջել և ստանալ գրավոր և բանավոր տեղեկատվություն,
- իրականացնել Կազմակերպության կանոնադրությունից, համաժողովի որոշումներից բխող այլ լիազորություններ:

9.15. Վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է հաշվետվություն ներկայացնել Կազմակերպության համաժողովին՝ Կազմակերպության գործունեության, արդյունքների, հաշվեկշռի, գույքի պահպանման և այլ գործառնությունների մասին: Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ չեն կարող լինել վարչության անդամները և նախագահը:

- 9.16. Վերստուգիչ հանձնաժողովը որոշումներ է կայացնում հանձնաժողովի անդամների ամբողջ կազմի ներկայությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ:
- 9.17. Կազմակերպության կառավարման մարմինների անդամ կարող է դառնալ միայն 18 տարին լրացած անձը:

10. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

- 10.1. Կազմակերպությունը իր կանոնադրական նպատակները և խնդիրներն իրականացնելու նպատակով կարող է ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:
- 10.2. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներն իրավաբանական անձ չեն, կարող են ստանալ գույք Կազմակերպության կողմից և գործում են վերջինս կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:
- 10.3. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ հիմնադրելու իրավունք ունի Կազմակերպության վարչությունը, որն էլ հաստատում է նրանց կանոնադրությունները:

11. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 11.1. Կազմակերպության կամավորը այն մարդն է, ով իրականացնում է Կազմակերպության կանոնադրական նպատակներից բխող հանրօգուտ աշխատանք իր ազատ կամքով:
- 11.2. Կազմակերպության կողմից կամավորներ ներգրավելու իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 11.3. Կազմակերպության կամավոր կարող է դառնալ յուրաքանչյուր չափահաս մարդ, իր դիմումի հիման վրա, նախօրոք Կազմակերպության կողմից հայտարարված կամավորական աշխատանքներում ներգրավվելու հայտարարության և Կազմակերպությունում կամավորական աշխատանքների առկայության դեպքում:
- 11.4. Կազմակերպությունը կարող է կամավորների ընտրությունը կատարել մրցույթային կարգով՝ կախված Կազմակերպությունում կամավորականների համար նախատեսված տեղերի և դիմորդների քանակից:
- 11.5. Կամավորները ընդգրկվում են միայն կազմակերպության ոչ ձեռնարկատիրական գործունեության աշխատանքներում:
- 11.6. Եթե կամավորի աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը, ապա Կազմակերպությունը կամավորների հետ կնքում է կամավոր աշխատանքի մասին պայմանագիր:
- 11.7. Կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը համաձայնություն է կամավորի և Կազմակերպության միջև, որի հիման վրա կամավորն իր կամքով, առանց վարձատրության և որոշակի ժամկետով իրականացնում է կամավոր աշխատանք, իսկ Կազմակերպությունն ապահովում է կամավոր աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ:

11.8. Կազմակերպության կամավորները ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ՝ բացառությամբ պայմանագրով սահմանված դեպքերում:

11.9. Կազմակերպության կամավորները իրավունք ունեն ծանոթանալու կամավորական աշխատանքի պայմաններին, ստանալ տեղեկատվություն կամավորական աշխատանքի վայրի, ժամաքանակի և կամավորական աշխատանքի հնարավոր փոխհատուցման պայմանների մասին:

11.10. Կամավորները իրավունք ունեն և պարտավոր են մասնակցել Կազմակերպության կողմից իրականացվող վերապատրաստումներին, սեմինարներին, եթե Կազմակերպությունը անհրաժեշտ է գտնում, որպեսզի կամավորները Կազմակերպությունում տվյալ կամավորական աշխատանքները կատարելուց առաջ ձեռք բերեն որոշակի գիտելիքներ և ունակություններ:

11.11. Կամավորը կարող է հրաժարվել կամավորական աշխատանքից այդ մասին բանավոր կամ գրավոր ձևով (իսկ կամավորի հետ կնքված պայմանագրի առկայության դեպքում պարտադիր գրավոր ձևով), օրենքով սահմանված կարգով, տեղյակ պահելով Կազմակերպության նախագահին կամ իր անմիջական ղեկավարին:

11.12. Կազմակերպության նախագահը կամ կամավորի անմիջական ղեկավարը իրավունք ունի դադարեցնել Կազմակերպությունում կամավորի գործունեությունը այդ մասին օրենքով սահմանված կարգով տեղեկացնելով կամավորին:

12. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1. Կազմակերպությունը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

12.2 Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը, նրա անդամների միջև չի բաշխվում:

12.3. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ շենքեր, շինություններ, բնակարանային ֆոնդ, տրանսպորտային միջոցներ, հող, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:

12.4. Կազմակերպության գույքի և միջոցների ստացման աղբյուրներ կարող են լինել՝

- Կազմակերպության անդամների անդամավճարները, դրամական և նյութական ներդրումները, նրա կողմից գույքը տիրապետելու, օգտագործելու, ինչպես նաև այլ գույքային իրավունքների փոխանցումը,
- Կազմակերպության կողմից իրականացված խորհրդատվական, փորձագիտական և այլ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,
- համայնքներին մատուցած ծառայությունների դիմաց ստացվող միջոցները,
- սեմինարների, գիտաժողովների և քննարկումների կազմակերպումից ստացվող միջոցները,
- ուսուցման և վերապատրաստման դասընթացների կազմակերպումից ստացվող միջոցները,
- հատուկ թեմատիկ դասընթացների կազմակերպումից ստացվող միջոցները,

- տեղական ինքնակառավարման և պետական մարմիններին տրամադրված վճարովի խորհրդատվությունից ստացող միջոցները,
- ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացումից ստացվող միջոցները,
- բանկերից և վարկային կազմակերպություններից ստացվող վարկերը,
- պետությունից, համայնքներից, միջազգային և տեղական կազմակերպություններից ստացվող դրամաշնորհները,
- այլ երկրների համայնքներից ստացվող դրամաշնորհները,
- քարեգործական ներդրումները, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրատվությունները,
- օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացվող միջոցները:

12.5 Կազմակերպությունը իր ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող միջոցների մասով վարում է առանձին հաշվառում:

12.6. ՀՀ տարածքում Կազմակերպության սեփականությունը գտնվում է ՀՀ պաշտպանության ներքո:

12.7. Կազմակերպության սեփականությունը կարող է բռնագանձվել միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

12.8. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն Կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար:

13. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

13.1 Կազմակերպության վերակազմակերպումը (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) կատարվում է նրա համաժողովի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով: Կազմակերպության վերակազմակերպումը դատական կարգով հնարվոր է միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Կազմակերպության համաժողովը պարտավոր է Կազմակերպության վերակազմակերպման մասին հնգօրյա ժամկետում հայտնել Կազմակերպության պարտատերերին:

13.2. Կազմակերպության լուծարումը հանգեցնում է նրա գործունեության դադարեցմանը՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցվելու: Կազմակերպությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարեցված, ՀՀ պետական լիազոր մարմնում համապատասխան գրանցում կատարելու պահից սկսած:

13.3. Կազմակերպությունը կարող է լուծարվել Կազմակերպության համաժողովի որոշմամբ կամ դատարանի որոշմամբ:

Կազմակերպության համաժողովը լուծարման մասին պարտավոր է հնգօրյա ժամկետում գրավոր հայտնել օրենքով սահմանված ՀՀ պետական լիազոր մարմնին:

Կազմակերպության համաժողովը, ՀՀ պետական լիազոր մարմնի համաձայնությամբ, կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում է լուծարման կարգը և ժամկետները:

13.4. Կազմակերպության լուծարման դեպքում լուծարային հանձնաժողովը պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, լուծարման մասին որոշում կայացրած մարմնի կողմից սահմանված կարգով, օգտագործում է նրա կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, եթե դա անհնար է, ապա փոխանցվում է պետական բյուջե, իսկ վեճի առկայության դեպքում հարցը լուծում է դատարանը:

13.5. Կազմակերպության լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարվում են օրենքով սահմանված կարգով: